Արձանագրություն N 3

Ազգային ժողովի 2026թ. կարիքների համար դյուրակիր համակարգչի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման

09.07.2026թ.
ժամը 12:30

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան*

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Հայրապետյան, Ա. Մանուկյան, Տ.Ավետիսյան, Գ.Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Հովհաննիսյան

**Նիստին բացակայում էր հանձնաժողովի նախագահ Վ. Թորոսյանը*

1. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 09.07.2026թ. ժամը 12:30-ին: Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ Ասատրյան Ռուզաննա Մանվելի ԱՁ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկվել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Ասատրյան Ռուզաննա Մանվելի ԱՁ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, անգործության ժամկետի, պայմանագիր կնքելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ասատրյան Ռուզաննա Մանվելի ԱՁ-ին հայտարարել ընտրված մասնակից:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահի Ժ/պ՝ _____ Ա. Հայրապետյան

անդամներ՝ _____ Ա. Մանուկյան

_____ Տ. Ավետիսյան

_____ Գ. Ավետիսյան

քարտուղար՝ _____ Ռ. Հովհաննիսյան